Հաստատված է
«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
Միակ բաժնետիրոջ
19-ը հունիսի 2026թ. N 19/06/2026-1 որոշմամբ
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2026

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) Հաճախորդների պատվերների կատարման քաղաքականությունը (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանում է Հաճախորդների պատվերների ընդունման և կատարման սկզբունքները, որոնցով Ընկերությունը առաջնորդվում է Հաճախորդների համար լավագույն արդյունք ապահովելու նպատակով: Մասնավորապես սահմանվում է, որ՝

(ա) Ընկերությունը այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարում է ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում:

(բ) Ընկերությունը ձեռնարկում է բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի կատարի հաճախորդի պատվերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով' հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի բնույթը և պատվերի կատարման հետ կապված այլ գործոնները:

(գ) Սույն քաղաքականության (բ) կետում նշված գործոնների հարաբերական կարևորությունը կամ կարևորության աստիճանը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ չափանիշները'

1. հաճախորդի պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ լինելը,
2. հաճախորդի պատվերի էական պայմանները (գնային, ծավալային և քանակական պայմանները, հաճախորդի առանձնահատուկ ցուցումները և այլն),
3. հաճախորդի պատվերում նշված արժեթղթերի բնութագրիչները (դասը և այլն),
4. գործարքի կնքման վայրի (միջոցի) առանձնահատկությունները:

(դ) Պատվերները կարող են կատարվել ինչպես կարգավորվող շուկայում, այնպես էլ դրանից դուրս:

ե) Ընկերության կողմից հաճախորդի տված պատվերը իրականացվում է ողջամիտ ժամկետում կամ հաճախորդի հետ համաձայնության առկայության դեպքում՝ տվյալ համաձայնությամբ սահմանված ժամկետում: Այնուամենայնիվ, Ընկերությունը չի երաշխավորում, որ ցանկացած պատվեր կկատարվի ժամանակին, եթե համապատասխան պատվերի կատարման գործընթացում ներառված են երրորդ անձինք:

զ) Ընկերության կողմից հաճախորդի պատվերների կատարումը իրականացվում է Ընկերության Բրոքերային (դիլերային) և պահառության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններով նկարագրված կարգով՝ առձեռն և/կամ ծրագրային ապահովման և/կամ

էլեկտրոնային հաղորդակցության և/կամ կապի այլ միջոցներով հաղորդագրություն/փաստաթուղթ փոխանցելու միջոցով: